

**ՎԱՀՐԱՄ ԳԱԼՍՅԱՆ**

Եղանակագիտության ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի, պետության և  
իրավունքի տեսության ամբիոնի մագիստրոս



## **ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<sup>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ</sup>**

Հեղինակը իր առջև խնդիր է դրել պարզաբանել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի ընտրության կարգը, առկա խնդիրների վերհանումը, դրանց լուսաբանումը, լուծման հնարավոր ուղիների բացահայտումը: Ներկայացվել են պաշտպանի ընտրության կարգի վերաբերյալ միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող մոտեցումները, դրանց հնարավոր կիրառությունները մեր երկրում: Հեղինակը քննարկել է պաշտպանին ներկայացվող որոշ պահանջներ՝ անդրադառնալով դրանց հիմնավորվածությանը և պրակտիկ նշանակությանը: Կատարվել են որոշ առաջարկություններ Պաշտպանի խնստիտուտի ընտրության կարգի վերաբերյալ՝ նրա անկախության երաշխիքները առավել կայուն դարձնելու համար:

**Հիմնարար բառեր** - մարդու իրավունքների պաշտպան, ընտրության կարգ, տարիքային ցենզ, անկախության երաշխիքներ, խորհրդարանական մողել:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) խնստիտուտը պատկանում է խորհրդարանական մողելին:

Սկզբնական շրջանում այն որպես սահմանադրական խնստիտուտ, ամրագրված չէր երկրի հիմնական օրենքում: ՀՀ Պաշտպանի խնստիտուտի սահմանադրական կարգավորման բացակայությունն առաջացնում է մի շարք խնդիրներ և դժվարություններ: Դրանք առաջին հերթին կապված են այն փաստի հետ, որ ՀՀ Սահմանադրությունը չէր նախատեսում օրենսդիր մարմնի կողմից Պաշտպանին նշանակելու որևէ իրավական հնարավորություն, ինչը գրկում էր այս խնստիտուտին իր անկախության կարևորագույն երաշխիքից:

Նշված բացը ժամանակավորապես լրացվեց պաշտպանի մասին օրենքի ընդունմամբ: Համաձայն նշված օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ մինչև Սահմանադրական փոփոխությունները ՀՀ Նախագահը ԱԺ պատգամավորական խմբերի և խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է Պաշտպանին: Նախագահի կողմից Պաշտպանին նշանակման նման կարգը բերեց մի շարք վիճարկելի խնդիրներ, քանի որ ՀՀ Նախագահի կողմից Պաշտպանին նշանակելու

պայմաններում լուրջ կասկածի տակ էր դրվում այս հաստատության անկախությունը, գործունեության արդյունավետությունը և վստահությունը: Մինչև 2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունները, 2004թ. ձմռանից - աշուն խորհրդարան էին ներկայացվել սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, օրենքի երեք նախագծեր, ՀՀ ԱԺ-ի կողայիցիայի, ժողովագույն խմբի, Սիավորված աշխատանքային կուսակցության և ՀՀ ԱԺ պատգամավոր Արշակ Սադոյանի կողմից<sup>1</sup>:

Նախագծում ներկայացվել էր նաև Պաշտպանի նշանակման կարգի հարցը: Մասնավորապես այդ նախագծի 81-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանին նշանակում էր Ազգային ժողովը ՀՀ Նախագահի առաջարկությամբ<sup>2</sup>: Մենք կարծում ենք՝ Պաշտպանի նշանակման նման մոտեցումը չի ստեղծում երաշխիքներ այլ պետական մարմիններից անկախ գործելու համար: Պատահական չէ, որ Պաշտպանը պետք է ընտրվի, այլ ոչ թե նշանակվի. դա արդեն խոսում է կառույցի անկախության և արդար գործելակերպի երաշխավորվածության մասին:

Օրենսդիր մարմնի կողմից Պաշտպանի ընտ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թելու կարգը՝ որպես նրա անկախության կարևորագույն երաշխիք, բխում է ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 20.12.1993 թվականի 48/34 բանաձևով ընդունված Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող փարիզայն սկզբունքներից և լայնորեն ընդունված միջազգային պրակտիկայից:

Պաշտպանի ինստիտուտն իր բնույթով սահմանադրափական ինստիտուտ է, որն իր սահմանադրական գերակայությամբ պետք է պայմանավորի նրա անկախության և գործունեության երաշխափորվածությունը: Զեավորված պրակտիկան ցույց է տալիս, որ, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՊՀ մի շարք երկրներում համարավոր է մարդու իրավունքների պաշտպանության առանձին և անկախ մարմնի գոյությունը<sup>3</sup>:

2005թ. նոյեմբերի 27-ին անցկացված հանրաքեի արդյունքում ընդունված Սահմանադրական փոփոխություններում Պաշտպանին վերաբերող դրույթները սահմանվեցին փոփոխություններով Սահմանադրության 18-րդ և 83.1-րդ հոդվածներով: Սահմանադրությամբ ամրագրվելով՝ Պաշտպանի ինստիտուտը դրվեց որակապես նոր հիմքի վրա:

ՀՀ Օրենսդիրը, որդեգրելով Պաշտպանի ինստիտուտի ձևավորման սկանդինավյան մոդելը, այնուհանդերձ, խուսափել է նրա գործունեության արդյունքում կայացվող որոշումները նորմատիվության հատկանիշով օժտելուց՝ այսպիսով պահպանելով դասական օմբուդմենի գործունեության էական առանձնահատկություններից մեկը<sup>4</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանության այս մեխանիզմը հատկապես կարևոր է հասարակության անպաշտպան խավերի համար:

Ուստի չենք կարող չիշատակել պրոֆեսոր Վ. Թիկիլի այն գմանահատականը, որ անկախ օմբուդմենի ինստիտուտի ստեղծումն ու գործունեությունը նոր էջ բացեց պետության և քաղաքացիների միջև հարաբերություններում իշխանական լիազորություններով օժտված անձանց՝ կառավարողների և կառավարվողների՝ ժողովրդի միջև<sup>5</sup>:

Պաշտպանի ընտրության կարգը առավել մանրամասն ներկայացվում է ՀՀ Պաշտպանի մասին օրենքի 3-րդ հոդվածով, մասնավորապես՝

- Պաշտպանի պաշտոնում կարող է ընտրվել 25 տարին լրացած, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող, վերջին հինգ տարում ՀՀ

քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

- Պաշտպանին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայնների առավագն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով, ԱԺ պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջադրված թեկնածուներից:

Պաշտոնը ստանձնելիս Պաշտպանը տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը՝ երդվում եմ, հավատարիմ լինելով ՀՀ Սահմանադրության ու օրենքներին, հասարակական համակեցության և արդարության սկզբունքներին, պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները»:

Երդվում եմ, որ լիազորություններս կկատարեմ անաշառ, առավելագույն բարեխղճությամբ և զանախիրությամբ»:

- Պաշտպանն իր պաշտոնը ստանձնում է նախորդ Պաշտպանի պաշտոնավարման ժամկետի ավարտման օրը: Եթե Պաշտպանի ընտրվելու պահին Պաշտպանի պաշտոնը թափուր է, ապա՝ իր ընտրության հաջորդ օրը:

- Պաշտպանի հերթական ընտրություններն անցկացվում են Պաշտպանի լիազորությունների ավարտին նախորդող 40 օրվա ընթացքում:

Թեկնածուն պետք է ունենա ՀՀ քաղաքացիություն, քանի որ քաղաքացիությունը պետության և անձի միջև կայուն իրավական կապն է, որի ուժով անձը, բացի իր բնական իրավունքներից ու ազատություններից, պետությունից ձեռք է բերում նաև քաղաքական իրավունքներ ու ազատություններ: ՀՀ Սահմանադրությունը պետական մարմիններում պաշտոն գրադենելու իրավունքը վերապահում է միայն իր քաղաքացիներին, ուստի Պաշտպանը պետք է ունենա քաղաքացիություն, քանի որ նրա պաշտոնը համարվում է պետական պաշտոն<sup>6</sup>:

Մինչև Սահմանադրության փոփոխությունները օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը ամրագրում էր, որ Պաշտպանի պաշտոնում նշանակվում է 35 տարին լրացած ՀՀ քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, հասարակության մեջ վայելում է բարձր հեղինակություն:

Սա նշանակում է, որ Պաշտպանի պաշտոնի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

համար առաջադրված թեկնածուն պետք է բավարարել նշված տարիքային ցենզը՝ ելնելով այդ՝ Պաշտպանի համար նախատեսված, բարձր պատասխանատվության աստիճանից՝ պետք է ունենա հասունության որոշակի մակարդակ, աշխատանքային ունակություններ և կենսափորձ, որպեսզի կարողանա հաջողությամբ լուծել իր առջև դրված բարդ խնդիրները:

Նշված պահանջներից տարիքային ցենզը ՀՀ-ում ներկայումս դարձել է 25 տարի, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ ողջամիտ չէ:

Բացի այդ, արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ այդ երկրներում օմբուդսմեն ընտրվելու (նշանակելու) տարիքային ցենզ է սահմանվում սկսած 35 տարեկանից, ինչը, կարծում ենք, առավել ողջամիտ կարգավորում է, քանի որ նման պահանջն ըստ էության առավել պատկերավոր է դարձնում մարդու և քաղաքացու մասնակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունների էությունն ու նշանակությունը:

Օրինակ, Իռլանդիայում օմբուդսմենի՝ առաջին անգամ նշանակված անձի տարիքը 61-ից բարձր չպետք է լինի: Նույնիսկ որոշ պետություններում սահմանված է տարիքային ցենզ, որը լրանալուց հետո օմբուդսմենի լիազորությունները դադարում են (Իռլանդիա, Դանիա):

Կամ Ո-Դ Մարդու իրավունքների լիազորի մասին օրենքի 6-րդ հոդվածում ամրագրված է. «Լիազորի պաշտոնը կարող է զբաղեցնել Ո-Դ քաղաքացի հանդիսացող 35-ից բարձր տարիքի անձը, որն ունի մարդու իրավունքների և ազատությունների բնագավառի գիտելիքներ, դրանց պաշտպանության փորձ»:

Օրենքի նախկին խմբագրությամբ Պաշտպանի պաշտոնը զբաղեցնելու համար նախատեսվում էր բարձրագույն կրթություն և մարդու իրավունքների ու ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ: Անհասկանալի պատճառներով, չգիտես ինչու, այս դրույթները հանվեցին:

Եվ լուրջ բերություն ենք համարում այն, որ օրենքն ըստ էության պարտադիր չի համարում Պաշտպանի՝ մասնագիտությամբ իրավաբան լինելու չափանիշը: Նշենք, որ, օրինակ, Լատվիայում ուղղակիորեն պահանջվում է, որ օմբուդսմենը ունենա իրավաբանության ոլորտում աշխատանքային փորձ: Այդ մասին է վկայում «Օմբուդսմենի մասին»

Լատվիայի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ օմբուդսմենը կարող է լինել Լատվիայի՝ 30 տարին լրացած այն քաղաքացին, ով տիրապետում է իրավունքի բնագավառում անհրաժեշտ գիտելիքների և ունի իրավագիտության բնագավառում աշխատանքային փորձ:

Իրավաբանական կրթության պարտադիր լինելու պահանջը և իրավական ոլորտում աշխատանքային փորձը անհրաժեշտ են այնքանով, որքանով ինստիտուտի կարևորագույն գործառույթը՝ մարդու իրավունքները պաշտպանելը և խախտված իրավունքները վերականգնելն է, հետևաբար այս գործառույթները իրականացնելու համար Պաշտպանը պետք է լինի փորձառու և ունենա իրավաբանական գիտելիքներ և կարողություններ:

Մասնագիտությամբ իրավաբան լինելու պայմանը կարևոր նշանակություն ունի Պաշտպանի թեկնածուի համար, որը, մեր կարծիքով, նաև խթան է հանդիսանում ինստիտուտի կենսունակության ապահովմանը:

Հաշվի առնելով, որ Պաշտպանի ինստիտուտը ՀՀ-ում գտնվում է դեռևս կայացման փուլում, կառույցը պետք է ունենա համապատասխան իրավական հիմքեր և երաշխիքներ, որպեսզի կարողանա իրեն դրսորել լավագույն կողմերով, կարողանա ձեռք բերել հասարակության իրազեկվածությունը և հավատը կառույցի նկատմամբ:

Միջազգային տարբեր երկրների փորձը նույնականացնելու համար է նշված ցենզի գոյության կարևորությունը: Մասնավորապես Լիտվայի Հանրապետության «Սեյմի հսկիչների մասին» 11.01.1994թ. N 1-363 օրենքի 2-րդ հոդվածը, Հունգարիայի Պետական ժողովի՝ քաղաքացիական իրավունքների հարցերով լիազորի մասին 1993թ. հունիսի 1-ի VIII օրենքի հոդված 3-ի մաս 1-ինը, Դանիայի քաղաքացիության՝ «Օմբուդսմենի մասին» 1996թ. հունիսի 12-ի N 473 հոդված 2-րդ, և մի շարք այլ երկրների օրենքները նախատեսում են քարձրագույն իրավաբանական կրթության ցենզը, ինչն իրավաշիռեն ՀՀ-ի պարագայում էլ է անհրաժեշտ:

Ընդգծված հատկանիշներից, կարծում ենք, առավել մեծ գործնական նշանակություն ունի պատգամավորներին ներկայացնելով պահանջներին Պաշտպանի համապատասխանության չափանիշը, քանզի հնարավոր չէ պատկերացնել այն մերորդը, ձևը, որով օրենսդիրը որոշում է հասարա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կության մեջ բարձր հեղինակություն ունենալու հանգամանքը: Ակնհայտ է, որ սա սուբյեկտիվ ընկալման խսդիր է: Դրա մասին ուղղակիորեն նշված է նաև ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում. «Իմքնին այդ պահանջը ընդհանուր ու հարաբերական է և դժվար մեկնաբանվող, որովհետև այն զնահատողական, արժեքային չափանիշների համակցություն է: Օրինակ, ինքը՝ հեղինակությունը՝ որպես երևոյթ, շատ տարրերակված պատկերացում կարող է լինել՝ կախված թեկնածուի սոցիալ-ժողովրդագրական խմբային պատկանելությունից կամ Էլ այն խմբի պատկերացումներից, ով գնահատում է այդ հեղինակությունը: Այսպիսով, իրական ձևականացված չափանիշներ, որոնցով կարելի կլիներ գնահատել մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուի հեղինակությունը, շատ դժվար է որոշել: Այն ավելի շատ խորհրդարանական բանավեճերի ընթացքում վերհանվող հատկություն է, որով կարող է կոչ արվել ընտրել կամ չընտրել այդ թեկնածուին »<sup>7</sup>:

Խոսելով այս ցենզի մասին՝ Պաշտպանը նախըսան ընտրվելը պետք է աչքի ընկնի իր անքափր վարքագծով, օժտված լինի բարոյական բարձր հատկանիշներով և վայելի հասարակության ամենալայն շերտերի հարգանքն ու վստահությունը: Պաշտպանի բարձր վարկանիշը հասարակության մեջ որոշվում է նրա մարդկային հատկությունների համակցությամբ (խոհեմություն, գիտելիքների բարձր մակարդակ, բարոյական տվյալներ, օրինակելի ընտանեկան հարաբերություններ, արժանավայել կենսաձև, գործարար հատկություններ և այլն): Հաշվի առնելով վերը թվարկված հատկանիշները, ինչպես նաև միջազգային պրակտիկան՝ մեզ իրատեսական չի թվում, որ քանիին տարին լրացած անձը կարող է վայելել հասարակության մեջ բարձր հեղինակություն:

Թվարկված չափանիշները ունենալու համար, մեր կարծիքով, առավել համապատասխան կլիներ նախկինում սահմանված տարիքային ցենզը՝ 35 տարեկանը, ինչը, մեր կարծիքով, կարող է համապատասխանել Սահմանադրությունում ամրագրված դրույթին:

Իսկ ինչ վերաբերվում է Պաշտպանի կողմից երդում տալուն, ապա այն չի կարող իրավական հետևանքներ առաջացնել խախտելու դեպքում, այդուհանդերձ, բարոյական բարձր հատկանիշներ ունեցող անձի համար այն լրացուցիչ խթան է, որ-

պեսզի բարեխսողորեն կատարի օրենքով իր վրա դրված պարտականությունները:

Այսպիսով, ներկայացվող ցենզերը, որոնք բացակայում են Սահմանադրությունում և Պաշտպանի մասին ՀՀ օրենքում, մեր կարծիքով, շատ կարևոր են. դրանց ամրագրումը կիմնական օրենքում և համապատասխան մյուս օրենքներում դրանց անհրաժեշտությունը կապված է այն փաստի հետ, որ դրանց առկայությունը միայն կնպաստի Պաշտպանի ինստիտուտի զարգացմանը և կենսունակության ապահովմանը: Դրանց վառ օրինակն է հանդիսանում վերոնշյալ միջազգային պրակտիկան, թե ինչպիսի կարգավիճակում են գտնվում եվրոպական մի շարք երկրներում օմբուդսմենի հաստատությունները: Ուստի նման բացրողումները հիմք են տալիս փաստելու, որ Պաշտպանի ինստիտուտը չի կարող գործել լիարժեք և հաղթահարել կառույցի առջև ծառացած խնդիրները:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը հանգել ենք հետևյալ եզրակացության՝

1. Օրենսդրի կողմից Պաշտպանին ներկայացվող կիմնական պահանջներից մեկը նրա 25 տարին լրացած լինելու հանգամանքն է: Օրենսդիրը այս տարիքը սահմանել է՝ կիմնակետ ունենալով ԱԺ պատգամագորի թեկնածուներին Սահմանադրությամբ և ընտրական օրենսգրքով սահմանված 25 տարին լրացած լինելու պահանջը: Մենք գտնում ենք, որ օրենսդրի պահանջը ողջամիտ չէ:

2. Մյուս պահանջը, որը ներկայացվել է Պաշտպանի պաշտոնը զբաղեցնել հավակնող անձին, վերջինիս կողմից հանրության մեջ բարձր հեղինակություն վայելելու պահանջն է: Անհասկանալի է, թե ինչ չափանիշների հիման վրա է որոշվելու՝ անձը ունի արդյոք բարձր հեղինակություն, թե՝ ոչ:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- <sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի Հանրապետության պետական մարմինների համակարգում: Ո. Մախմուլյան. Իրավաբան. զիտ. թեկնածուի հայցման ատենախոսություն, Եր. 2008թ. էջ 64:
- <sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի Հանրապետության պետական մարմինների համակարգում: Ո. Մախմուլյան. Իրավաբան. զիտ. թեկնածուի հայցման ատենախոսություն, Եր. 2008թ. էջ 65:
- <sup>3</sup> Տե՛ս Կոզմինых Н.В. Институт Уполномоченного по правам человека (Омбудсмана) в странах содружества независимых государств (СНГ) Дисс. на соискание степени кандидата юридических наук М., 2004. С. 17.
- <sup>4</sup> Տե՛ս Օմբուդսմենը և ժողովրդավարական հասարակությունը / Համաշխարհային փորձ/, «Արեգ» հրատ. Երևան 2003թ. էջ 186:
- <sup>5</sup> Տե՛ս Pickl V. The Protection on Human Rights by the office of the Austrian Ombudsman (volksanwultschalt) Austrian-Soviet Round Table, Arlington, 1992, p. 13.
- <sup>6</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի վերաբերյալ պարզաբանումներ, հեղինակ Վ. Այվազյան. Եր.: 2004թ. էջ 9:
- <sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ. ընդհանուր խմբարություն՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.-Եր.: «Իրավունք», 2010թ. էջ 787:

**Վագրամ Գալստյան**

Магистр кафедры Конституционного права,  
теории государства и права юридического  
факультета Ереванского гос. университета

### РЕЗЮМЕ

#### *Особенности порядка выбора защитника прав человека в РА*

Автор перед собой поставил цель выяснить порядок выбора Зашитника Прав Человека в Армении, выявление имеющихся проблем и их освещение, раскрытие возможных путей решения. Представлены в международной практике имеющиеся подходы относительно порядка выбора Зашитника и их возможные применения в нашей стране.

Автор рассмотрел некоторые требования к защитнику, ссылаясь на их обоснованность и практическое значение. Сделаны некоторые предложения о порядке выбора института Зашитника для большей стабильности гарантии его независимости.

**Ключевые слова:** Зашитник Прав Человека, порядок выборов, возрастной ценз, гарантия независимости, парламентская модель.

**Vahram Galstyan**

YSU Faculty of Law, Master's Programme  
Constitutional Law, Theory of Law and State

### SUMMARY

#### *Particularities of the systems and options in the Human Rights defender in Armenia*

The author has set a goal for himself to find out how to select a of Human Rights in Armenia by exposure (shedding some light) on the existing problems and their coverage, disclosing possible solutions of them. Armenia had the opportunity to be exposed to the international practice of the existing procedures of selecting the available defenders.

The author explored some of the requirements presented to defenders concentrating on their validity and pragmatic importance. Some suggestions have been made on the selection of the Defenders' Institute for greater guarantees and stability of its independence.

**Keywords:** Human Rights Protectors, the Selection Procedures / System, the Age Category, the Guarantee of Independence, Parliamentary Model.